«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	«Ուսուցման համագործակցային մեթոդների և ՏՀՏ գործիքների կիրառումը ռուսաց լեզվի դասաժամին «Գոյականի սեռը» թեման ուսումնասիրելիս»:
ԱՌԱՐԿԱ	Ռուսաց լեզու
ՀԵՂԻՆԱԿ	Անահիտ Ալեքսանյան
ՄԱՐԶ	Արագածոտն
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Զորագլխի Յուրիկ Հովհաննիսյանի անվան միջն. դպրոց

Բովանդակություն

Բովանդակություն----------2

Ներածություն ----------3-4

Գլուխ 1. Ուսուցում: Ուսուցման միջոցները: ----------5-6

1.1.Համագործակցային ուսուցում, դրա առավելությունները----------7-8

1 .2. Համագործակցային ուսուցման մեթոդներ և հնարներ----------9-10

Գլուխ 2. Առցանց գործիքների կիրառումը ուսուցման գործընթացում-------11-12

2.1.Կրթական առցանց գործիքների դասակարգումը----------12-13

2.2.Ուսուցչին օժանդակող ՏՀՏ գործիքներ----------14

Գլուխ 3. «Գոյականի սեռը» թեմայի ուսումնասիրությունըհամագործակցային մեթոդների և ՏՀՏ գործիքների կիրառմամբ----------15

3.1.Դաս 1----------16

3.2.Դաս 2----------17

3.3.Դաս 3----------18

Եզրակացություն----------19-20

Գրականության ցանկ----------21

Ներածություն

Սովորելը մի ամբողջ կյանք ձգվող երևույթ է, Որի ցակնացած փուլոիմ մենք ստանում ենք որոշակի գիտելիքներ: Դպրոցական փուլում մենք ստանում ենք գիտելիքներ, որը ընդհանուր է բոլորի համար և մենք փորձում ենք աշխատել այնպես, որպեսզի բարելավենք ուսման որակը:

Ուսուցման բազմաթիվ ձևեր ու մոտեցումներ կան: Այս աշխատանքում մենք կհետազոտենք ուսուցման ձևերից մի քանիսը՝ ուսուցման համագործակցային մեթոդները և ուսուցումը ՏՀՏ գործիքների միջոցով կիրառելով դրանք ռուսաց լեզվի դասաժամին «Գոյականի սեռը» թեման ուսումնասիրելիս: Կպարզենք, թե ինչից են բաղկացած, դրանց օգտագործման նպատակներն ու ինչ խնդիրներ կլուծենք, դրանք կիրառելով:

Թեմայի արդիականությունը կապված է ժամանակակից զարգացման, դպրոցականների նոր պահանջների հետ, և դրանք բավարարելու և որակը բարձրացնելու համար մեզ անհրաաժեշտ են վերոնշյալ մոփոդնեևն ու միջոցները: Այժմ սովորողները ձգտում են նորին, տեղեկատվականին, նյութի հետաքրքիր լինելուն,բազմազանությանը, սակայն հետին պլան մղելով միջանձնային շփումը, համագործակցությունը և պատասխանատվությունը: Այսպիսով, եթե ուզում ենք ուսումը ներառել այս շրջանակ, պետք է կրթության ձևերն ու միջոցները տեղափոխենք այս հարթություն: Այս աշխատանքի միջոցով կառաջադրվեն խնդիրներ և կսահմանեմ նպատակներ, որոնց հասնելու համար կլուծենք խնդիրները:

Հետազոտական աշխատանքիս նպատակներն են՝ զարգացնել ուսուցիչների համագործակցային դասեր պլանավորելու և անցկացնելու հմտությունները: Կատարելագործել կիրառման հմտությունները: Բարձրացնել ուսուցման և ուսումնառության որակը: Երեխաների մեջ զարգացնել բառերի սեռային տարբերությունը հասկանալու հմտություններ:

Աշխատանքիս խնդիրներն են՝ ուսումնասիրել ուսուցման համագործակցային մեթոդներն ու ՏՀՏ գործիքները, դրանց էությունը: Ուսումնասիրել համագործակցային դասեր պլանավորելու մոթոդական սկզբունքները:Ստեղծել «Գոյականի սեռը» թեմայի ուսուցման դասի պլան: Ստեղծել «Գոյականի սեռ» թեմայի ՏՀՏ գեծիքների կիրառմամբ դասի պլան: Անցկացնել այդ պլանով դասեր: Քննարկել դասը սովորողների հետ:

Введение

Обучение – это явление на протяжение всей жизни, в ходе которого мы приобретаем определённые знания на разных этапов. На школьном этапе мы получаем общие для всех знания и стараемся работать так, чтобы повышать качества образования.

Существует множество методов и подходов к обучению. В этой работе мы рассмотрим некоторые стили обучения, методы современного обучения и обучения использованием инструментов ИКТ, применив их к курсу русского языка при изучении темы ,, Род существительных,,. Узнаем из чего они состоят, для каких целей их используют и какие задачи и решим применяя их.

Актуальность темы связана с современным развитием, новыми запросами школьников, и для их удовлетворения и повышения качества необходимы вышеперечисленные методы и средства. Учащиеся теперь жаждут богатства и разнообразия нового информационного материала, но за счёт межличностного общения, сотрудничества и ответственности. Таким образом, если мы хотим включить обучение в эти рамки, мы должны перенести формы и средства образования в это измерение. Благодаря этой работе я буду представлять проблемы и ставит цели, для достижения которых мы будем решать проблемы.

Моё исследование направлено на повышение качества навыки планирования и проведения совместных уроков. Совершенствовать навыки применения. Повышение уровня обучения учителей. Развивать у детей навыки понимания родового различия слов.

В задачи моей работы входит изучение методов совместного обучения и инструментов ИТК, их сущности. Изучить методологические принципы планирования совместных уроков. Создать учебный план по теме ,,Род существительного,, с использованием ИКТ-рисунков. Проводить уроки по этому плану. Обсудить урок с учащимися.

Գլուխ 1. Ուսուցում: Ուսուցման միջոցները:

Աշխարհը միանգամայն արագ ու անսպասելիորեն փոխվում է: Իսկ մեր աշխարհայացքը ձևավորվում է տեղեկատվության ու գիտելիքի վրա: Այժմյան աշխարհում ամեն ինչ հարաբերական է կամ էլ ամբողջությամբ սխալ:

Ուսուցում տվող մարդիք արդեն իսկ գիտակցում են, որ հնում օգտագործվող մոտեցումները չեն կարող ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են այժմյան քաղաքացուն այս գիտելիքնեիր հեղաշրջման դարաշրջանում հարմարավետ կյանքով ապրելու համար: Այդ իսկ պատճառով ամենուրեք, ցանկացած երկրում, ինչպես նաև Հայաստանում, անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման նոր, ժամանակակից մոտեցումներ:

Համագործակցային ուսուցումը դասավանդման խնդիրների լուծման միջոցներից մեկն է: Չնայած իր տարածմանը, այն լայն կիրառում չունի: Դրա պատճառը բացասական արդունքը չէ: Այն համարվում է ժամանակակից կրթության, դասավանդման և ուսուցման ամենաշատ ուսումնասիրված ոլորտներից մեկը: Այսինքն գիտելիքների հասարակությունում անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ուսուցման վերաբերվող հետազոտությունների արձագանքները բավական խոստումնալից են:Կրթության մատչելիությունն ու հասանելիությունը՝ որպես

1.Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ., Համագոակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006, 123 էջ: Խ 282 Ուսուցման առդյունավետ հնարներ/ Ս. Խաչատուր Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, հայաստան 2020.- 74 էջ:

հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական միջոցներ, ամրագրվել են դեռևս 1990-ականներին, երբ ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-Ի [1] անդամ երկրների կողմից ընդունվեցին «Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան» (1989թ. ՄԱԿ) և «Կրթությունը բոլորի համար

համաշխարհային հռչակագիրը» (2002թ.Դակար)։ Հայաստանում Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամը արդեն 24 տարի բազմաբնույթ ծրագրերի միջոցով հայ հասարակությանը ուզում է հասանելի դարձնել սոցիալ-դեմոկրատիայի հիմնական գաղափարներն ու արժեքները՝ արդարությունը, ազատությունը և համերաշխությունը։ Այս արժեքներով առաջնորդվող հասարակությանը երկրում հիմնական շարժիչ ուժը կենսունակ և ուժեղ ժողովրդավարությունն է։ Հասարակության ձևավորման հիմնասյուներից կարևորագույնը որակյալ կրթությունն է։ ՖԷՀ ծրագրերի հիմնական գործիքներից մեկը ոչ ֆորմալ կրթություն տրամադրելն է։

1.1 Համագործակցային ուսուցում, դրա առավելությունները

Համագործակցային ուսուցումն ու ավանդական խմբային աշխատանքը խիստ տարբեր են և պետք է դրանք իրարից տարբերել: Դասապրոցեսի ժամանակ հաճախ են կատարվում խմբային աշխատանքներ, բայց քչերն են վարպետացել ինտեգրել համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները: Հենց այդ է պատճառը, որ համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում ուսուցման ընթացքում: Եվ այդ խնդիրը հանգեցնում է նրան, որ աշխատանքը ավելի շատ մնում է ավանդական խմբային աշխատանք, այլ ոչ թե համագործակցային ուսուցում:

Համագործակցային ուսուցումը դպրոցում կիրառելը բավականին ժամանակատար գործընթաց է: Իսկ հենց Հայաստանի և հայկական դպրոցներն էլ հիշեցնում են ուսուցիչների և սովորողների անավդական համայնքներ: Դրա շնորհիվ էլ համագործակցային ուսուցումը Հայաստանում ունի ներդրման և զարգացման համար անհրաժեշտ հիմք և բարենպաստ պայմաններ[2]: Համագործակցային ուսուցում ունի բազմաթիվ առավելություններ, որոնցից ամենակարևորը այն է, որ համագործակցային ուսուցման ընթացքում խմբի[3] յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտների միջոցով Համագործակցային ուսուցման

2.Ավագյան Ա., Գևորգյան Ս., Կյուրեղյան Հ., Գրիգորյան Ռ., (Խմբ.)(2019) Ներառական կրթության ռազմավարություններ: Դասագիրք: Մինեապոլիս, ՄԻՆԵՍՈԹԱ, ամն, Մինեսոթայի համալսարան: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

3. https://hy.m.wikipedia.org>wiki բոլոր արդյունքները Համագործակցային ուսուցում- Վիքիպեդիա Երևան, Հայաստան, 249 էջ

ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակման միջոցով հմուտ համագործակցողների ձևավորելը։
Այն մեծացնում է սովորողների ինքնուրույնությունն ու պատասխանատվությունը։ Դրական փոխկախվածություն. խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ։ Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն։ Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը։ Քննարկումներն ու ձգտումներն օգնում են փոխհարաբերությունների զարգացմանը։

Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համագործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար։ Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.Խմբի յուրաքանչյուր պատրաստ է պատասխանելու և

մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների համար, ներկայացնում է խմբի աշխատանքի աշխատանքի արդյունքը։ Սոցիալական հմտություններ. Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը։ Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է։ Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցություն հետադարձ կապը։

1.2.Համագործակցային ուսուցման մեթոդներ և հնարներ

Գրեթե միշտ հակադրման մեջ են դնում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն ըև աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտոցումները միանգամայն լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատ: Սակայն այս մոտեցումները հիմնավորված չեն գիտականորեն: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Իհարկե այդ ամենին կարելի է հասնել նաև ավանդական մոտեցումները օգտագործելով: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են և անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ ինտերակտիվ ուսուցումն ոունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց մնացորդայինգիտելիքների մակարդակը՝ ցածր:Հետևաբար նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մոթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են արդյունաավետ լինել: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Յուրաքանչյուր դաս և դասարան տարբեր է, ւստ այդմ պետք է նաև տարբեր լինեն մոտեցումները, որպեսզի հասնենք արդյունքի:

Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը: Այս ձեռնարկում մենք դասապրոցեսը բաժանում ենք 3 մասի ըժև յուրաքանչյուրի համար առաջարկում մեթոդներ և հնարներ՝

դասի սկիզբ

նոր նյութի բացատրություն

սովորածը պարզելու հնարներ:

Այդ հնարների շարքին են դասվում հետևյալները՝ ԳՈՒՍ մեթոդ, դերային խաղ, քեյզ, մտագրոհ, կենտրոններով աշխատանք, երկու բան և այլ մեթոդներ։Այս մեթոդներն ու հնարներն շատ արդյունավետ կլինի կիրառել ռուսաց լեզվի դասաժամին, հատկապես, խնդրահարույց թեմաների ուսումնասիրության ժամանակ, որոնցից է «Գոյականի սեռը» թեման։

Գլուխ 2. Առցանց գործիքների կիրառումը ուսուցման գործընթացում

Մեր օրերում ամենաարժեքավոր ռեսուրսըտեղեկատվությունն է, իսկ ամենաանփոխարինելին՝ ժամանակը , որը ժամանակակից մարդուն խիստ պակասում է: Իհարկե կյանքի բարձր տեմպը, ժամանակի արագացած զարկերակը հսկայական ազդեցություն ունեն մատաղ սերնդի դաստիարակության և կրթության վրա: Ժամանակակից ուսուցիչը պետք է հստակ հասկանա, որ երեխաները, որոնց ինքը պատրաստվում է սովորեցնել, ծնվել և դպրոց են եկել արդեն 21-րդ դարում, ինչը նշանակում է, որ նրանք մեծացել և ձրավորվել են բոլորովին այլ տեղեկատվական տարածքում, քան 80-90- ականների երեխաների սերունդները: Հասկանալի է, որ համակարգիչը դառնում է սիրված ժամանց, դպրոցականի կյանքի անբաժանելի հատկություն, իսկ երբեմն էլ, ցավոք, լավագույն ընկեր:

Համակարգչային տեեխնոլոգիաների դարաշրջանը նոր թառ է հավաքում և չկա մարդու գործունեության մեկ ոլորտ, որտեղ նրանք չեին գտնի իրենց կիրառումը: Անհասկանալի է, որ ժամանակակից ուսուցիչը հետ մնա իր աշակերտներից, այնպես որ մենք անընդհատ ստիպված ենք քրտնաջան սովորել, ժամանակին հետևել, տիրապետել ուսուցման նոր տոխնոլոգիաների,

մեթոդների և ձևերի։ Մանկավարժական տեխնոլոգիաները հեռու չեն մնացել համակարգչայնացման գործընթացից։

2.1. Կրթական առցանց (ՏՀՏ) գործիքների դասակարգումը

ՏՀՏ գործիքները դասակարգվում են՝

1. Ըստ լուծված մանկավարժական առայադրանքների.

. նշանակում է հիմնական դասընթացների տրամադրում (էլեկտրոնային դասագրքեր, ուսումնական համակարգեր, գիտելիքների կառավարման համակարգեր),

. գործնական ուսուցման գործիքներ (խնդիրների գրքեր, սեմինարներ, վիրտուալ դիզայներներ, սիմուլյացիոն ծրագրեր, սիմուլյատորներ), օժանդակ միջոցներ (հանրագիտարաններ, բառարաններ, գրքեր կարդալ, համակարգչային խաղեր զագացնել, մուտիմեդիա դասընթացներ)։

. բարդ միջոցներ (հեռակա)։

2. Ըստ ուսումնական գործընթացի կազմակերպման գործառույթների.

. տեղեկատվություն և ուսուցում (էլեկտրոնային գրադարաններ, էլեկտրոնային գրքեր, պարբերականներ, բառարաններ, տեղեկատու գրքեր, ուսումնական համակարգչային ծրագրեր, տեղեկատվական համակարգեր)։

. ինտերակտիվ (էլ. փոստ, էլեկտրոնային հեռկոնֆերանս),

. որոնիչներ (կատալոգներ)։

3.Ըստ տեղեկատվության տեսակի.

. էլեկտրոնային և տեղեկատվական ռեսուրսներ տեքստային տեղեկատվությամբ (դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, խնդրագրքեր, թեստեր, բառարաններ, տեղեկատու

գրքեր, հանրագիտարաններ, պարբերականներ, թվային տվյալներ,ծրագրեր և ուսումնական նյութեր),

. տեսողական տեղեկատվությամբ էլեկտրոնայն և տեղեկատվական ռեսուրսներ (հավաքածուներ՝ լուսանկարներ, դիմանկարներ, նկարազարդումներ, գործընթացների և երևույթների տեսահոլովակներ, փորձերի ցուցադրում, վիդեո շրջայցեր, վիճակագրական և դինամիկ մոդելներ, խորհրդանշական օբեկտներ՝ գծապատկերներ),

. աուդիո տեղեկատվությամբ էլեկտրոնային և տեղեկատվական ռեսուրսներ (բանաստեղծությունների ձայնագրություններ, դիդակտիկ խոսքի նյութեր, երաժշտական ստեղծագործություններ, կենդանի և անկենդան բնույթի հնչյուններ, համաժամանակյա աուդիո օբյեկտներ),

. աուդիո և վիդեո տեղեկատվությամբ էլեկտրոնային և տեղեկատվական ռեսուրսներ (կենդանի և անկենդան բնույթի աուդիո և վիդեո օբյեկտներ, առարկայական էքսկուրսիաներ)։

2.2.Ուսուցչին օժանդկող ՏՀՏ գործիքներ

Ռուսաց լեզվի և գրականության ուսուցչին հասանելի ՏՀՏ տեղնոլոգիաներից դասը ավելի արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ են հետևյալ գործիքները.

. Wisemapping և Popplet առցանց գործիքները, որպես ուսումնադաստիարակչական գործընթացի պլանավորում իրականացնող ՏՀՏ միջոցներ։

. Edpuzzie և Canva առցանց գործիքները, որպես ուսումնական բովանդակային թվային ռեսուրսների պատրաստման ՏՀՏ միջոցներ։

. Quizizz, Learning Apps առցանց գործիքները, որպես ուսումնական գործընթացի արդյունավետությունը գնահատող ՏՀՏ միջոցներ։

. Google Drive, Google Docs ամպային և տեղեկատվության պահպանման տեխնոլոգիաներ։

. Google Sites որպես ավարտական թեմատիկ նախագծեր ներկայացնելու տեխնոլոգիա։

ՏՀՏ գործիքները և ուսուցման համագործակցային մեթոդները օժանդակում են ուսուցչին և օգնում են ուսուցման գործընթացը դարձնել ավելի արդյունավետ «Ներառական կրթության կարիք ունեցող» երեխաների համար, և օգնում են նրանց լիարժեք ինտեգրել դասարանին և հասարակությանը։

Ներառական կրթություն եզրույթը նշվում է որպես մոտեցում, որը չի բացառում որևէ երեխայի կրթությունը։ Ներառական կրթության հիմքում մարդու կրթությունից օգտվելու իրավունքն է։ Միջազգային տարբեր փաստաթղթերը պետություններին ուղղորդում են իրենց ձանքերն ուղղելու իրավունքահենք կրթությանը։ ՅՈՒՆԻՍԵՖ-ի սահմանման համաձայն՝ կրթության համակարգը ներառական է, եթե ներառում է բոլոր աշակերտներին և ողջունում ու օժանդակում է նրանց սովորելու հարցում։ Ոչ ոք չպետք է բացառվի։ Բոլոր երեխաները՝ ներառյալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողները, ունեն կրթության իրավունք։

Գլուխ 3 «Գոյականի սեռը» թեմային ուսումնասիրությունը ուսուցման համագործակցային մեթոդների կիրառմամբ

Հաշվի առնելով, թե որքան խնդրահարույց է «Գոյականի սեռը» թեմայի ուսումնասիրությունը հայկական դպրոցում (քանի որ հայոց լեզվում սեռային տարբերությունը վերաբերվում է միայն մարդկանց) այս թեման պետք է ուսումնասիրել հնարավորինս արդյունավետ և պատկերավոր, հայկական կրթությամբ երեխային այն հասկացնելու համար: Դասի անցկացման քայլերը պետք է կազմակերպեսլ նպատակային, աշխատանքի մեծ մասը թողնել սովորողների վրա, քանի որ յուրաքանչյուր անհատ բարձր է գնահատում իր աշխատանքը և կենտրոնանում է դրա վրա, այդպիսով աշխատանքից քաղելով առավելագույնը, իսկ ուսուցիչը պետք է լինի նրան ուղղորդողն ու օժանդակողը:

Վերը նշված փաստարկները և պնդումները ապացուցելու համար մշակել եմ համագործակցային մեթոդների և ՏՀՏ գործիքների կիրառմամբ դասերի պլաններ և անցկացրել եմ դասեր:

3.1 Փորձարարական դաս 1

Հավելված 1

Առաջին հետազոտական դասս անցկացրել եմ 5-րդ դասարանում՝ ուսումնասիրելով «Գոյականի սեռը» թեման։ Դասը կազմակերպել եմ համագործակցային մեթոդների կիրառմամբ։ Օգտագործել եմ մտագրոհ, խմբային աշխատանք, պրիզմա մեթոդները։ Դասարանի մասնակցությոնը բավականին բարձր էր, սովորողները հաճույքով էին մասնակցում դասապչոցեսին, հատկապես տպավորությունը մեծ էր պրիզմա մեէոդի կիրառման ժամանակ, երբ երեխաները հասկացան, որ կարելի է ընդհանուր բան գտնել իրար հետ կապ չունեցող բառերի մեջ։ Թերությունը կայացավ նրանում, որ մի քիչ աղմկոտ էր, քանի որ սովուրողների ոգևորությունը մեծ էր և բոլորը ուզում էին արտահայտել իրենց մտքերը։ Թեմայի յուրացման տեսանկյունից կարթղ եմ ասել, որ յուրացվեց բավականին արդյունավետ, ամենակարևորը սովորողները արդյունավետ համագործակցում էին։ Երբ ուսուցիչն է նրանց փորձում բացատրել, որ ռուսաց լեզվում բառերը ունեն երեք սեռ, զարմանում են և դժվար են ընկալում, իսկ համագործակցելով խմբերով հասնում են բավականին լավ արդյունքի, քանի որ գիտակցում են, որ դրանից է կախված իրենց խմբի արդյունքը։ Համարում եմ, որ կարողացա լուծել իմ առջև դրված խնդիրները։

3.2 Փորձարարական դաս 2

Հավելված 2

Երկրորդ դասը անցկացրել եմ նույն թեմայով 10-րդ դասարանում ՏՀՏ գործիքների կիրառմամբ ։ Օգտագործել եմ Learning Apps, Edpuzzie, Quizizz գործիքները։ Այս դասն իմ անցկացրած ամենաարդյունավետ դասերից մեկն էր։ Դասի սկզբում սովորողներին բաժանեցի երկու խմբի, այնուհետև դիտեցինք Edpuzzie գործիքով կազմված տեսաշարը՝ պատասխանելով հարցերին, որը ակտիվություն առաջաբերեց բոլորի մոտ, որից հետո լուծվեց Learning Apps-ով կազմված վարժությունը։ Այս դասից իմ հետևությունն այն եղավ, որ ժամանակակից սովորողին ՏՀՏ-ն ավելի հոգեհարազատ է։ Ի տարբերություն առաջին դասի այստեղ աղմուկը բացակայում էր։

Իմ կարծիքով վերը նշված մեթոդների կիրառումը ունի նաև տարիքային առանձնահատկություն։ Բարձր դասարանների սովորողները ավելի շատ սիրում են գործել քան խոսել, իսկ ցածր դասարաններում հակառակն է։ Ըստ այդմ ես եկա այն եզրահանգման, որ ցածր դասարաններում համագործակցային մեթոդներն են արդյունավետ,իսկ բարձր դասարաններում ՏՀՏ գործիքների կիրառումը։ Այս դասապրոցեսի թերությունը կայանում է նրանում, որ համակարգչային սարքավորումների և համացանցի հետ կապված խնդիրների պատճառով ժամանակի որոշակի կորուստ գրանցվեց։

3.3 Փոձարարական դաս 3

Հավելված 3

Երրորդ փորձարարական դասը անցկացրել եմ կրկին 5-րդ դասարանուն՝ կենտրոնների տեղափոխման մոդելով: Դասարանում սովորող աշակերտների թիվը 9 է: Երեխաներին բաժանեցի երեք խմբի՝ կենտրոնի և յուրաքանչյուր կենտրոն սկսեց կատարել իրեն հանձնարարված աշխատանքը: Դասի ընթացքում օգտագործել եմ տեսադասեր և Learning Apps էլեկտրոնային գործիքով կազմված վարժություն: Վերլուծելով դասը կարող եմ ասել, որ այն սպասվածից արդյունավեր էր, մինչև այս դասը ես կարծոիմ էի, որ այս թեման բավականին խրթին է : Սակայն սովորողները ցուցաբերեցին բավականին բարձր պատասխանատվություն և պարտաճանաչ կատարեցին իրենց առջև դրված խնդիրները: Ես փորձեցի մրցակցային դաշտ ապահովել և նախորոք ասացի, որ բարձր կգնահատվի այն խումբը, ով ավելի մանրամասն կկատարի իր հանձնարարությունը: Դասի թերությունը կայացավ նրանում, որ թույլ աշակերտները պասիվություն ցուցաբերեցին: Կարծում եմ, որ նախորոք պիտի ասեի, որ խմբի աշխատանքը ներկայացնելու է ամենաթույլ անդամը: Այս մեթադը նույնպես արդյունավետ է ուսուցման պրոցեսում օգտագործելու համար, հատկապես, եթե ուզում ես բարձրացնել աշակերտի համագործակցելու ունակությունը, պատասխանատվությունը և ինքնուրույն լինելու, ստեղծագործելու հատկությունները:

Եզրակացություն

Կատարելով ուսումնասիրություններ և անցկացնելով փորձարարական դասեր տարբեր մեթոդների կիրառմամբ, եկա այն եզրահանգման, որ դասապրոցեսին պետք է մոտենալ ինչպես արվեստի գործի, պետք է հնարավորինս հետաքրքիր ու պատկերավոր կազմակերպես այն, քանի որ ժամանակակից տեղեկատվական և տեխնոլոգիապես զարգացած աշխարհում դժվար է աշակերտի մեջ հետաքրքրություն, սեր և ձգտում առաջացնել ուսման նկատմամբ և, եթե աշակերտին չենք կարողանում կտրել համացանցից և համակարգչից, ապադրանք պետք է ներմուծենք դպրոց և օգտագործենք որպես ուսուցման արդյունավետ միջոց՝ հետո չիմանալով ժամանակի պահանջներից: Ժամանակակից ուսուցիչը պետք է հետաքրքիր լինի աշակերտին և պահպանի ուսուցանողի դերը ցանկացած ոլորտում: 21-րդ դարում ուսուցիչը պետք է համագործակցի աշակերտի հետ, այլ ոչ թե հրամայի և վարի ուսուցչակենտրոն դաս: Իկս դրա վառ ապացույցը համագործակցային մեթոդների կիրառմամբ դասերի ընթացքում գրանցված արդյունքներն են: Սովորողին պետք է տալ ստեղծագործելու, արտահայտվելու, փնտրելու և ինքնուրույն լինելու իրավունք, բայց միևնույն ժամանակ ուղղորդելով և վերահսկելով այդ գործընթացը:

Համագործակցային մեթոդների և ՏՀՏ գործիքների կիրառումը արդյունավետ կլինի, եթե դրանք օգտագործենք հերթափոխելով, հաճախ նաև զուգորդելով՝ դասապրոցեսի միօրինակությունից դուրս գալու համար: Մենք պետք է անընդմեջ նորովի կազմակերպենք մեր դասը՝ անսպասելի իրավիճակներ ստեղծելով, որովհետև անսպասելին և խորհրդավորը գրավում են սովորողի ուշադրությունը: Օրինակ, երբ նրանք տեսանյութ են դիտում հարցերին պատասխանելով հարցերին, անգամ ամենաթույլ աշակերտը ակտիվություն է ցուցաբերում: Փորձարարական դասերից ստացած օգուտները կօգտագործեմ հետագա գործունեության ընթացքում:

Այսպիսով՝ ամփոփելով աշխատանքս կարող եմ ասել, որ ուսուցիչը պետք է լինի սեռծագործող և նորարար: Եվ ինչպես ասել է ականավոր ռուս մանկավարժ Ուշինսկին՝ «Մանկավարժությունը գիտություն չէ, այլ արվեստ» և, որ «ուսուցիչը արվեստագետ է, աշակերտը՝ արվեստի գործ, իսկ դպրոցը՝ արհեստանոց:

Заключение

Проводя исследования и экспериментальные уроки с использованием различных методик, я пришла к выводу, что к процессу урока нужно подходить как к творчеству, организовать его максимально интересно и ярко, ведь в совместном информационном технологически развитом мире это трудно- вызвать у ученика интерес, любовь и стремление к обучению, и если мы не можем отрезать ученика от интернета и компьютера, мы должны ввести его в школу и использовать как эффективное средство обучения. Современный учитель должен быть интересен ученику и сохранять роль учителя в любой области. В 21 веке учитель должен сотрудничать с учеником, а не диктовать и вести урок, ориентированный на учителя. Другим ярким доказательством этого являются результаты, зафиксированные на уроках с использованием кооперативных методов. Учащемуся должно быть представлено право создавать, выражать, искать и быть самим собой, но то же время направляет и контролирует процесс.

Использование совместных методов и инструментов ИКТ будет эффективным, если мы будем использовать их попеременно и часто в сочетании, чтобы нарушать монотонность учебного процесса. Мы должны постоянно реорганизовать наш урок, создавая неожиданное и таинственное привлекает внимание учащегося. Например, когда они смотрят видео с ответами на вопросы, даже самый слабый ученик проявляет активность. Пользу, которую я получил от экспериментальных занятий, я буду использовать в своей будущей деятельности.

Таким образом, подводя итог своей работе, могу сказать, что учитель должен быть творцом и новатором. И как сказал выдающийся русский педагог Ушинский: <<Педагогика – не наука, ф искусство>> и что <<учитель- художник, ученик- произведение искусства, а школа- мастерская>>.

Գրականության ցանկ

1. Հովհաննիսյան Ա, Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան «Անտարես» հրատ., 2006, 123 էջ:

2. Ավագյան Ա., Գևորգյան Ե., Կյուրեղյան Հ., Գրիգորյան Ռ., (Խմբ.) (2019) Ներառական կրթության ռազմավարություններ: Դասագիրք: Մոնոպոլիս, Մինեսոթա, ԱՄՆ. Մինեսոթայի համալսարան: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան, 249 էջ:

3. Խ. 282 Ուսուցման արդյունավետ հնարները/ Ս. Խաչատուր Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.-74

4. https://monster-evo.ru/hy/belinskijj/chto-takoe-ikt-v-obrazovanii-vidy-sov8emennyh-informaciono-komunikativnyh-tehnologii-i-trebovaniya

5. https://multiurok.ru/blog/hamagortsakts-ayin-owsowts-man-met-odnere.htm

6. https://docs.google.com/document/d/15hPGoB9hY9eztwpQIZtvGxPjJx8kGpcd/edit?usp=drivesdk&ouid=101070357802041533613&rtpof=true&sd=true

7. https://hy.m.wikipedia.org»wikiԲոլորարդրունքներըուսուցում-Վիքիպեդիա